

Թովմաս չգնաց Հնդկաստան: Վկայեալ աւանդութիւնն դիւրութեամբ չմահանայ:

Եւսեբիոս (*Hist. Eccl.* III. I.), Հերոնիմոս, Որոգինէս, Սոկրատէս Պատմիչ, Հիպպոլիտէս, Սոփրոնիոս և այլ նոյնաւարաս հնազոյն Պատմաբանք վկայեն թէ Թովմային վիճակեցաւ Պարթևաստանի Աւաքելութիւնն: Սակայն՝ Արևմտեան Գրիստոնէից Յայսմաւուրք և Հնդկաբնակ Գրիստոնէայք միաբանին ի վկայել թէ Թովմաս քարոզեց նաև Պարսից, Բաքարիացոց, Եթէովպէացոց և Հնդկաց զոր St. Paulinus Natali վաւերացուցանէ հետեւեալ բանիւր:

Parthia Matheum Complectitur,
India Thomas¹. Դէ Գուին, այսպէս վկայէ առ այս: — « Հոյւք Հեղինակք, « երկրորդ Յունական և Ասորական, միա- « բանին՝ համաձայնութեամբ հաստատե- « լով թէ Թովմաս թափանցեաց ի Հնդկաս- « տան առ ի քարոզել գրանն² »: Նոյնն հաւաստեն նաև « Գործք Թովմայի » (*Acta Thomae*):

(Շարումակելի)

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻՍՏՈՆԵՍ



ՊԱՍՏԱԿԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ Մ'ԱՌԹԻ

(Առ ազնիւ Խմբագրութիւն ՆԱԽԱՍԱՐԻ Թերթի)

ՆԱԽԱՍԱՐԻ գրական գեղարուեստական ամսաթերթի ֆետր. ի և Մարտի Պրակներուն մէջ հրատարակուեցաւ հետաքրքրաշարժ ուղեգրութիւն մը, հայ եպիսկոպոսի մը կողմանէ 1489-ին Ատլանդեանի ջուրերուն վրայ կատարուած շրջագայութեան:

Մարտիրոս Երզնկայ եպիսկոպոսի գրութիւնն է, զոր փարիզեան ձեռագրի վրայէն Սէն-Մարդէն թագմանած էր զաղղիբէրէնի և հրատարակած *Journal Asiatique* թերթին մէջ 1826-ին³, որմէ այժմ Պ. Յ. Քիւրտեան վերստին կը թարգմանէ հայերէն լեզուի:

Մինչև հոս ոչինչ տարօրինակ և զովեստի արժանի են թէ՛ թարգմանիչը և թէ՛ հրատարա-


կիչը, որ ազգային այսպիսի հետաքրքրական պատմիկ մ'ընդհանրութեան ծանօթացնելու փորձն ունեցած են: Աւելի ևս զովելի կը համարինք ՆԱԽԱՍԱՐԻ Մեծ. Խմբագրութիւնն որ աննախանձ հոգով հրապարակաւ կը դիմէ՝ « այս քսեւաւսիքն և մասնաւորապէս Միսիսարիս և Հայքերուն ուշադրութիւնը նրա շիրիշով անոր վրայ և խնդրելով իրենցմէ որ քարհնէին խմբագրութեան յայտնել այս մասին իրենց ունեցած կարծիքները և կամ ծաւորութիւնները, երբ ունին »:

Բանասիրութեան առջև եւր յայտնութիւն մը չէ այս գրութիւնը. հրատարակուած է նաև *Revue de l'Orient* թերթին մէջ 1862-ին, Հ. Ալիշան ալ ռազ-վանսի մէջ (էջ 194-197) կը յիշատակէ թէ՛ հեղինակը և թէ՛ ուղեգրութիւնը և քաղելով կը գտէ հայ բնագրին այն մասը՝ որ վեհնեղոյ նկարագրութեան կը պատկանի:

Դիտելու է միայն որ Մարտիրոս եպիսկոպոս եւրոպական ափերէն չհեռանալով Ատլանդեանի մէջ խորատուգտելով, և տեղի չկայ Գոլմուպոսի բարեբաղդ և աշխարհագրութեան նաւարկութեան հետ համեմատելու:

Թարգմանութեան նկատմամբ ալ մի քանի անուանց ստուգութիւնը խաթարուած կ'երևի անվարժութեամբ. օրինակի համար երբ փոխառնակ իննովկէնտիոս քահանայապետի՝ Սլեմեդի-ի մը կը հանդիպինք, կամ երբ աւետարանական երեք մոզերը Մամէս թագաւորներ կ'ըլլան:

Հ. Յ. ԱՌԻՐ



ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Գ.

Կարդալով « Բարձրափանք »-ը

Ա. Բ. ԳԻՐՔ

(էջք 1 - 72)

Շատ մեծ հաճոյցով եւ միանգամայն շատ մեծ զայրութով կարդացի « Բարձրափանք »-ի երկու գրեքերը. հաճոյցով՝ որովհետեւ ազուր բաներ կան մէջը, զայրութով՝ որովհետեւ տգեղ բաներ կան մէջը: Աղուր բաներուն վրայ խոսողներ եղան, բայց տգեղներուն վրայ՝ իմ տեսակէտովս՝ խօսուած բան մը չտեսայ: Այդ ոչ հաճելի պաշտօնը ահա ես ինքս կը ստանձնեմ, յուսալով օգտակար ըլլալ, այդ է միակ նը-

1. Dr. Noland. *History of the British Empire in India and the East* (Chap. XXXIII. p. 571).

2. Des Guignes. *Acad. des Inscript* (liv 5. p. 23).

3. Տես է Նոր Մասնագր. Հ. Ա. Դ. է Մարտիրոս Երզնկայի և յէջ 1890, Սեն Մարգրէի գործոց մէջ, Եւս. փոք 1880 թ. 1, յաւելած, էջ 33.